ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/97

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Մոսէսքո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մոսէսքո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, յուղերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5538-2021 գրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 07.04.2021թ.-ի թիվ Ե/40/852-21 գրության հիման վրա, 13.04.2021թ.-ին «Մոսէսքո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 13.04.2021թ.-ին:

14.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/97 համարի ծածկագիրը:

22.04.2021թ.-ին և 13.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.05.2021թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 07.04.2021թ.-ի թիվ Ե/40/852-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար՝ «Յուղերի» ձեռքբերման նպատակով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/21» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի թիվ 3 չափաբաժնով պահանջվող BSE-32 "YORK" կամ համարժեք յուղի մատակարարման նպատակով մասնակցության հայտ է ներկայացրել «Մոսէսքո» ՍՊԸ-ն, առաջարկելով XA-30 յուղ:

Հայտերի բացման և գնահատման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի թիվ 3 չափաբաժնով հայտարարված BSE-32 "YORK" կամ համարժեք յուղի փոխարեն առաջարկում է XA-30 յուղ, որը համարժեք չէ հրավերով սահմանված BSE-32 "YORK" յուղին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջներով հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և 26.03.2021թ. ծանուցել է «Մոսէսքո» ՍՊԸ-ին, մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Մոսէսքո» ՍՊԸ-ն 27.03.2021թ. ուղարկել է շտկված հավելված N 1.1, որտեղ թիվ 3 չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում գրել է BSE-32 "YORK" համարժեք XA-30:

Հանձնաժողովը 30.03.2021թ. ժամը 14:00-ին վերսկսել է իր աշխատանքը, քննարկելով «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած շտկումը՝ թիվ 3 չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, հայտնեց, որ BSE-32 "YORK" յուղը սինթետիկ յուղ է, որին համարժեք կարող են լինել Emkarat RL 32H, Donfoss 160Z, York Tun "0", Suniso SL 32 յուղերը, իսկ առաջարկվող XA-30 յուղը նախատեսված է ամիակային միջավայրում աշխատող կոմպրեսորների համար և հանքային յուղ է:

Քանի որ թիվ 3 չափաբաժնով «Մոսեսքո» ՍՊԸ-ի առաջարկը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին, գնահատող հանձնաժողովի կողմից «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը թիվ 3 չափաբաժնով գնահատվել է անբավարար և մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մոսէսքո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 23.04.2021թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ս/թ մարտի 16-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «Յուղերի» ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊ9Բ-43/21» ծածկագրով գնման ընթացակարգ 12 չափաբաժիններով: Գնման ընթացակարգի թիվ 3 չափաբաժնով մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Մոսէսքո» ՍՊԸ-ն, հրավերով սահմանված BSE-32 "YORK" կամ համարժեք յուղի փոխարեն առաջարկելով XA-30 յուղ:

Հայտերի բացման և գնահատման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի թիվ 3 չափաբաժնով հայտարարված BSE-32 "YORK" կամ համարժեք յուղի փոխարեն առաջարկում է XA-30 յուղ, որը համարժեք չէ հրավերով սահմանված BSE-32 "YORK" յուղին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջներով հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և 26.03.2021թ. էլեկտրոնային եղանակով համակարգի միջոցով ծանուցել «Մոսէքսո» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Մոսէքսո» ՍՊԸ-ն 27.03.2021թ. (ոչ աշխատանքային շաբաթ օր) ուղարկել է շտկված հավելված N 1.1, որտեղ թիվ 3 չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում գրել է BSE-32 "YORK" համարժեք XA-30:

Շաբաթվա առաջին աշխատանքային օրը՝ 29.03.2021թ., մինչև կասեցման ժամկետի ավարտը, տեղի է ունեցել հեռախոսային խոսակցություն «Մոսէքսո» ՍՊԸ-ի աշխատակիցների հետ առաջարկելով ուղարկել BSE-32 "YORK" յուղին համարժեք յուղի տեխնիկական բնութագիր, այդ ժամանակ էլ «Մոսէքսո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ասել է, որ BSE-32 "YORK" և XA-30 յուղերը սառնարանային յուղեր են, պարզապես BSE-32 "YORK" յուղը սինթետիկ յուղ է, իսկ XA-30-ը նախատեսված է ամոնյակով աշխատող սառնարանների համար: Հարկ եմ համարում նշել, որ «Մոսէքսո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հստակ գիտեր, որ իր կողմից առաջարկվող յուղը համարժեք չէ հրավերով պահանջվող յուղին և առաջարկում է այն, ինչը որ ունի «Մոսէքսո» ՍՊԸ-ն:

Ծանոթանալով սույն ընթացակարգի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած «Մոսէքսո» ՍՊԸ-ի դիրքորոշման հետ, պարզվում է «Մոսէքսո» ՍՊԸ-ն գտնում է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի, 43-րդ կետի 1-ին ենթակետի և 46-րդ կետի պահանջները:

Համաձայն Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի՝

«Անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար»:

Հարկ եմ համարում նշել, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պահպանել է վերը նշված պահանաջը, ինչը հաստատվում է հանձնաժողովի անդամների կողմից լրացրած գնահատման թերթիկների և արձանագրությունների վրա հանձնաժողովի անդամների ստորագրություններով:

Համաձայն Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի՝

Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (Ականավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Հայտնում եմ, որ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (Ականավորված) տարբերակը Կարգի պահանջներին համապատասխան հրապարակվել է տեղեկագրում, որում մանրամասն գրված է, որ պատվիրատուն ցանկություն ունի գնելու BSE-32 "YORK" կամ համարժեք յուղ, իսկ «Մոսէսքո» ՍՊԸ-ն առաջարկում է XA-30, որը համարժեք չէ հրավերի պահանջին: Ցանկանում եմ նշել նաև, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն, ինչպես ինքն է ներկայացնում, լինելով տասնամյակների փորձ ունեցող ընկերություն, տիրապետում էր և գիտեր, որ վերը նշված յուղերը համարժեք չեն, առավել ևս, որ ինտերնետային կայքերում հստակ նշված է առաջարկվող XA-30 յուղին համարժեք յուղերը:

Ինչ վերաբերվում է Կարգի 46-րդ կետի պահանջներին, ապա այն ուժը կորցրել է 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ ըստ «Մոսէսքո» ՍՊԸ-ի դիրքորոշումը, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի, 43-րդ կետի 1-ին ենթակետի և 46-րդ կետի պահանջները, ամբողջությամբ անհիմն են:»:

3. <u>«Մոսէսքո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 14.04.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մոսէսքո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5538-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 22.04.2021թ.-ին հրավիրված նիստին:

Մասնակիցը 21.04.2021թ.-ին ներկայացնելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

««Մոսէքո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել «Հայկական ատոմային էլեկտրական» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/21» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է հետևյալ. «Մոսէքո» ՍՊԸ՝

թիվ 3 չափաբաժնով նախատեսված է BSE-32 «YORK» կամ համարժեք, Ձեր կողմից ներկայացվել է XA-30,

թիվ 10 չափաբաժնով նախատեսված է «Յուղի որակը պետք է համապատասխանի CH4, CJ4..... »,

թիվ 10 և 11 չափաբաժիններով ներկայացրել եք «Յուղի որակը պետք է համապատասխանի..... », սակայն պետք է գրել «Յուղի որակը համապատասխանում է..... »:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Մոսէքո» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության.

«Կարգի 41-րդ կետի պահանջներով հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր նիստը, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը «Մոսէքո» ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունը:

«Մոսէքո» ՍՊԸ-ի հայտը թիվ 3 չափաբաժանով հայտը շտկումից հետո էլ չի համապատասխանել հրավերի պահանջներին:»

Արդյունքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.04.2021թ. արձանագրության 5-րդ կետով որոշել է «Մոսէքո» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատաս-խանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Մոսէսքո» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/21» ծածկագրով ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ թիվ 3 չափաբաժնով նախատեսված է

BSE-32 «YORK» կամ համարժեք, «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է XA-30, թիվ 10 չափաբաժնով նախատեսված է «Յուղի որակը պետք է համապատասխանի CH4, CJ4.....», թիվ 10 և 11 չափաբաժիններով ներկայացրել եք «Յուղի որակը պետք է համապատասխանի.....», սակայն պետք է գրել «Յուղի որակը համապատասխանում է.....»:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Մոսէսքո» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝ Կարգի 41-րդ կետի պահանջներով հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր նիստը, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը «Մոսէսքո» ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունը:

«Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը թիվ 3 չափաբաժանով հայտը շտկումից հետո էլ չի համապատասխանել հրավերի պահանջներին:»

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը 05.04.2021թ. արձանագրության 5-րդ կետով որոշեց «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

«Մոսէսքո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2021/97 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

Բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 46-րդ կետի ահանջները, որը սահմանում է, որ ներկայացված տեխնիկական բնութագրերում անհամապատաս¬խանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատող հանձնաժողովի 24.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետը, պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի նկարագրել արձանարված անհամապատասխանությունը, այլ ընդամենը վերացական նշել է, որ թիվ 3 չափաբաժնով նախատեսված է BSE-32 «YORK» կամ համարժեք, «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է XA-30:

Այսինքն գնահատող հանձնաժողովի կողմից ուղղակի նշվել է, որ 3 չափաբաժնով նախատեսված է եղել BSE-32 «YORK» կամ համարժեք, իսկ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է XA-30 ու չի նշվել, թե ինչ է անհամապատասխանություն է թույլ տվել և ինչ պետք է շտկել:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նույնիսկ այս ոչ իրավաչափ շտկման պարագայում՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից կատարվել է շտկումը՝ իրեն համար ընկալելի սահմաններում և այն սահմանված ժամկետում ներկայացվել գնահատող հանձնաժողովին /ապացույցը կցվում է/:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տասնամյակների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Վերոհիշյալի արդյունքում ակնհայտորեն խախտվել է նաև իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն տես ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ 723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները):

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Մոսէսքո» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով սպանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:»:

Մասնակիցը 28.04.2021թ.-ին ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Մոսէսքո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/97 ծածկագրով ընթացակարգը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ուսումնասիրելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը՝ պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը միայն թիվ ՍՑ-ԼՕ-2021/97 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացրած դիրքորոշմամբ է անդրադառնում այն հանգամանքին, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն թիվ 3 չափաբաժնով նախատեսված BSE-32 «YORK» կամ համարժեք ներկայացնելով XA-30, նկատի է ունեցել,

որ XA-30 յուղը համարժեք չէ BSE-32 «YORK» յուղին (չնայած կրկին նշված չէ, թե որ պաարամետրերով համարժեք չէ), մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրել է միայն /ըստ էության շտկման ծանուցումն է դա/, որ թիվ 3 չափաբաժնով նախատեսված է BSE-32 «YORK» կամ համարժեք, «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է XA-30, այսինքն որևէ մանրամասն նկարագրություն չի եղել թե ինչ անհամապատասխանություն է արձնագրվել Հրավերի պահանջների նկատմամբ և թե ինչ պետք է շտկվի ՍՊԸ-ի կողմից:

Մինչդեռ՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Այսինքն, գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 46-րդ կետի ահանջները, որը սահմանում է, որ ներկայացված տեխնիկական բնութագրերում անհամապատաս¬խանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետը, պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի նկարագրել արձանարված անհամապատասխանությունը, այլ ընդամենը վերացական նշել է, որ թիվ 3 չափաբաժնով նախատեսված է BSE-32 «YORK» կամ համարժեք, «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է XA-30:

Այսինքն գնահատող հանձնաժողովի կողմից ուղղակի նշվել է, որ 3 չափաբաժնով նախատեսված է եղել BSE-32 «YORK» կամ համարժեք, իսկ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է XA-30 ու չի նշվել, թե ինչ է անհամապատասխանություն է թույլ տվել և ինչ պետք է շտկել:

Ինչ վերաբերվում է այսպես ասած «բանավոր զրույցներին», ապա դրանք համարում ենք չհիմնավորված և ընդհանրապես չեն համապատասխանում իրականությանը:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նույնիսկ այս ոչ իրավաչափ շտկման պարագայում՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից կատարվել է շտկումը՝ իրեն համար ընկալելի սահմաններում և այն սահմանված ժամկետում ներկայացվել գնահատող հանձնաժողովին:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Մոսէսքո» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից յուղերի ձեռքբերման նպատակով 16.03.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 3-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել «Մոսէսքո» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. «Մոսէսքո» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է XA-30:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ թիվ 3 չափաբաժնով նախատեսված է BSE-32 «YORK» կամ համարժեք, սակայն Մասնակցի կողմից ներկայացվել է XA-30.....:

vi. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մոսէսքո» ՍՊԸ-ին առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 26.03.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի llcmosesco@gmail.com էլ. փոստի հասցեին՝ առաջարկելով մինչև կասեցման ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

viii. 27.03.2021թ.-ին «Մոսէսքո» ՍՊԸ-ն ներկայցրել է թիվ 1.1 հավելվածով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը, որում որպես 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է BSE-32 «YORK» համարժեք XA-30:

ix. Հանձնաժողովի 30.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Մասնակցի հայտը 3-րդ չափաբաժնի մասով շտկումից հետո կրկին չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես գնման ընթացակարգի հրավերով պահանջվել է BSE-32 «YORK» կամ համարժեք յուղ, սակայն ներկայացվել է BSE-32 «YORK» համարժեք XA-30, ինչից ելնելով որոշում է կայացվել «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար, քանի որ BSE-32 «YORK» յուղը սինթետիկ է, որին համարժեք կարող է լինել Emkarat RL 32H, Donfoss 160Z, York Tun «0», Suniso SL 32 յուղերը, իսկ առաջարկվող XA-30 յուղը նախատեսված է ամիկյան միջավայրի աշխատող կոմպրեսորների համար:

x. Հանձնաժողովի 05.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ որոշում է կայացվել «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

xi. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 07.04.2021թ.-ի թիվ Ε/40/852-21 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5538-2021 գրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275 փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից յուղերի ձեռքբերման նպատակով 16.03.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-43/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 3-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Մոսէսքո» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է XA-30: Հանձնաժողովի 24.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ թիվ 3 չափաբաժնով նախատեսված է BSE-32 «YORK» կամ համարժեք, սակայն Մասնակցի կողմից ներկայացվել է XA-30....., ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մոսէսքո» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի արդյունքում Հանձնաժողովի քարտուղարի կողմից 26.03.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի llcmosesco@gmail.com էլ. փոստի հասցեին՝ առաջարկելով մինչև կասեցման ավարտը շտկել արձանագրված անհամապա-տասխանությունները: 27.03.2021թ.-ին «Մոսէսքո» ՍՊԸ-ն ներկայցրել է թիվ 1.1 հավելվածով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը, որում որպես 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է BSE-32 «YORK» համարժեք XA-30: Հանձնաժողովի 30.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ Մասնակցի հայտը 3-րդ չափաբաժնի մասով շտկումից հետո կրկին չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես գնման ընթացակարգի հրավերով պահանջվել է BSE-32 «YORK» կամ համարժեք յուղ, սակայն ներկայացվել է BSE-32 «YORK» համարժեք XA-30, ինչից ելնելով որոշում է կայացվել «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար, քանի որ BSE-32 «YORK» յուղը սինթետիկ է, որին համարժեք կարող է լինել Emkarat RL 32H, Donfoss 160Z, York Tun «0», Suniso SL 32 յուղերը, իսկ առաջարկվող XA-30 յուղը նախատեսված է ամիկյան միջավայրի աշխատող կոմպրեսորների համար: Հանձնաժողովի 05.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի 5-րդ ենթակետով որոշում է կայացվել «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 30.03.2021թ.-ին՝ Մասնակցի հայտն անբավարար գնահատելու հիմքով, սակայն «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 07.04.2021թ.-ի թիվ Ե/40/852-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն

իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն, ըստ էության, անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5538-2021 գրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/97 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**